

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՎԱՐՉԱԿԱՆ, ԺՈՂՈՎԱԿԱՆ  
ԵՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ

Ս. Աթոռոյա Տնօրէն Ժողովը, նոկտ. 1-31 ամսօրեայ ընթացքին, իբր զործադիր իշխանաւթին եւ վարչական մարմին, զուարուեցաւ տասն անգամներ, իսկ իբրեւ կրօնական ասեան երկու անգամ, եւ զբաղեցաւ եկեղեցական, վարչական, մատակարարական, ամուսնական եւ ժառանգական գործերով:

Ձեռն. 14ին, ուր Տնօրէն Ժողովը ընդունեց Տ. Կիրակոյ վրդ.ի հրաժարականը ժառանգաւորացի տեսչութենէն եւ այդ պաշտօնին կռիւն իր անդամներէն Տ. Տիրան վրդ.ը, որ պիտի կատարէ Ընծայարանի եւ ժառանգաւորացի տեսչութեան պաշտօնը, ժառանգաւորացի բաժնին համար իրեն փոխ տեսուչ ունենալով Տ. Զգօն վրդ.ը. իսկ Տ. Կիրակոյ վրդ. որ ընտրուեցաւ տեսուչ մատենադարանաց, նոյն ասեան պիտի վարէ Ս. Թարգմանչաց վարժարանի տեսչութեան պաշտօնը:

Ձեռն. 17ին, բշ. զուարուեցաւ Միաբանական Ընդհանուր Ժողով. կարգացուեցաւ Մայր Աթոռոյ Գեր. Զոգեւոր Խորհուրդի 17 սեպտեմբեր 1932 թուակիր եւ համար 606 պաշտօնագիրը, որով կը շնորհուէր Էլձմիածնի համազումարին մասնակցութեան կարեւորութիւնը: Յետ երկար խորհրդակցութեան, ժողովը այն կարգակցութեան յանգեցաւ թէ, հակառակ անկեղծօրէն զգացուած փափաքներու, կամքէ բոլորովին անկախ պատճառներու հետեանքով, անկարելի պիտի ըլլայ, ինչպէս Ս. Պատրիարք Զօր անձամբ երթան ի Ս. Էլձմիածին, նոյնպէս նաեւ Միաբ. Ընդհ. Ժողովին, միաբան հոգեւորականի մը միջոցաւ ուղղակի պատգամաւոր մը զրկելու: Ս. Պատրիարքն յայտնեց թէ ինքը որովայն է կարողորհիւ որ Էլձմիածնի միաբաններէն Տ. Բագրատ Արքեպ. ստանձնէ իր ներկայացուցչութիւնը. իսկ Միաբ. Ընդհ. Ժողովը միաձայնութեամբ իրեն ներկայացուցիչ որոշեց Տ. Գարեգին արքեպ. Յովսէփեանը: Այս որոշումները անմիջապէս հետագործի եւ յաջորդ օրը պաշտօնագրով հաղորդուեցան ի Ս. Էլձմիածին:

Ահաւասիկ Բարեկարգական հարցի մասին Ընդհ. Ժողովի քուէարկած բանաձեւը.

«Միաբանական Ընդհանուր Ժողովը, համախոս եւ համասիր. ցանկութիւն յայտնեց որ եկեղեցակոյ ներկայացուի յառաջիկայ Ազգային Եկեղեցական Ժողովին. Ընդհանուր Ժողովս նկատելով որ, նման պատճառներով, արտասահմանի Պատգամաւորներէն եւս ամեն գուցէ անկարող լինին անձամբ մասնակցելու այդ կարեւոր Ժողովին, ջիւմօրէն ցանկալի կը գտնուի Մայր-Արք. գումարելի Ժողովը Ամենայն Հայոց Հայրապետի ընդարձակէն յետոյ երբ ուզէ գրաւի Եկեղեցոյ Բարեկարգու-

րեան խնդրով առ այժմ բուսականաց պատասանելով միայն ծրագիրներ այդ մասին, եւ զանոնք Հայաստանէ ներս եւ դուրս կազմուած Յանձնախումբերու նկատմամբ եւ մանրամասնեալ ուսումնասիրութեան յանձնելի վերջ միայն, ապագային, նորընտիր Հայրապետի ամօրինութեամբ, այս մտօք նորա նախագահութեամբ գումարելի Ժողովի մը մէջ կատարէ պարս ու պատշաճ, ամբողջ Ազգին եւ Եկեղեցիին կարծիքն ունենալով վերջ այդ մասին»:

Ձեռն. Ժողովոյ այն նիստին մէջ Տ. Նորայր վրդ. ընտրուեցաւ անդամ Տնօրէն Ժողովոյ. ի տեղի Տ. Տիրան վրդ.ի, որ վարժարանաց տեսուչ կարգուելուն հետեւանքով ըստ օրինի հրաժարած էր Տնօրէն Ժողովի անդամակցութենէն: Տ. Նորայր վրդ., իր արդէն ունեցած պաշտօններուն բերմամբ — Ասենապետ Միաբ. Ընդհ. Ժողովոյ եւ տեսուչ սպարանի — հրաժարեցաւ Տնօրէն Ժողովոյ անդամակցութենէն, բայց իր հրաժարականը մերժուեցաւ եւ այս պատճառաւ զազրած նկատուելով Մայր Գիւնիի ատենապետութենէն, նոյն զիրքին բարձրացաւ Բ. Ասենապետը Տ. Սիւն վրդ., իսկ Տ. Տիրան վրդ. ընտրուեցաւ Բ. Ասենապետ Մայր Գիւնիի:

1 Հոկտ. շր. Պաղատինի անկլիքան նորընտիր եղիակ. Գեր. Ճօրն Չըրսեղի Պրատն, ընկերակցութեամբ իր ամբողջ կրօնին, այցելեց պատրիարքարան, Ս. Պատրիարքը, շրջապատուած միաբանութեան եպիսկոպոսներէն եւ զըլխաւոր վարդապետներէն պատուաղիր սիրով ընդունեց նորին Գերապատուութիւնը, որ ն. Ամենպատուութեան հազօրեց Գէնջըրլիի արքեպիսկոպոսին կարգաբանակ ուղղոյնները. տեսակցութիւնը եղաւ շատ յարգական. ն. Գ. սիրալիր զգացմամբ խօսեցաւ նաեւ Լոստոն ուսանող մեր երկու նորընծայի մասին:

12 եւ 13 Հոկտ. զշ. եւ եշ. կատարուեցաւ պատրիարքարանի ընդհ. զոյնց նոր ցուցակագրութիւնը, վերստուգութեամբ հինին, եւ, ըստ սովորութեան, ամէնքը յանձնուեցան Ս. Պատրիարք Զօր:

14 Հոկտ. ուր. Թարգման Տ. Պարգե վրդ. եւ զիւսանապետ Պ. Կ. Նուրեան յանուն Ս. Պատրիարքին գային կառավարչատուն, Բեթղեհէմի պատկանեալ գործոց մասին խորհրդակցութեանց ներկայ գտնուելու համար:

24 Հոկտ. բշ. պետական աւագ քարտուղար Վսեմ. Մր. Երնկ եւ իր տիկինը, Անկլիքան եկեղեցոյ Արշտիւրէնը եւ ուրիշ հոգեւորականներ, իրենց ընտանեաց հետ, այցելեցին Ս. Պատրիարքին, որ պատուասիրեց զիրենք:

25 Հոկտ. զշ. Ս. Պատրիարքը, Տ. Սմբատ Սրբազանի եւ տասնի չար վարդապետաց ընկերակցութեամբ հիմնօրհնէքը կատարեց շաւիշի մեծ արտոց կոչուած գետին լլայ կառուցանելի այն երեք մեծ յարկաբաժնիներուն, որոնց կառուցումը որոշուած է Ընդհանուր եւ Տնօրէն Ժողովներով, եւ որոնց ամբողջ վարձքը պիտի գործածուի պարտուց շինուցման ձեռնար-

կինս Գլխաւոր անկիւնափայլին մէջ առաջին յարկարաժինին, որ պիտի կառուցուի Չէթինեան եղբարց նուիրատուութեամբ, զհանգուեցաւ սա յիշատակարանը:

«Յոսի Տեան 1932, ի Լսան եւ կիցն ամսեան Հոկտեմբերի, յաւար Երեւոսարարոց, ի Քաղաւորութեան Գերիօխան Անգլիոյ ՃՕՐՃ Ե.Ի եւ ի Մարզպետութեան Պաղեսիքի Ճէնէրալ Սըր Արքրը Կընճիկ Ուոքրի, ի Հայրապետական Ամենայն Հայոց Տեան Գեորգայ Ս. Հանգուցեալ Կարողիկոսի, ձեռամբ եւ Օրհնութեամբ Պատրիարքի Հայոց Ս. Մուսաղէմի Տեան Քորզումայ Արքայան Արքեպիսկոպոսի Գուսակեան, արկեալ եղին կիսուցն ստորնայալի կնգեցուցն միւրեանցաց եւ վերանայալի երկոցուցն ասնց, որ օրհնեաց եւ արդեամբ կատարին, զոր տարին, շնորհ Տ. Համազասպ Արքայապետի Ղազարեանի Քաղիւնցոյ Տեպի Աւանոց Հայոց Յոպպէի, Յակոբ եւ Յովհաննէս Չէթինեան Սըրաբ ի Յոպպէ Բողալէ, վասն յիւստակի իւրեանց եւ ի վաշխումն Ուխտի Առաքիլական Արքայոց Հայոց Սրբոց Յակոբեանց:

Այս զի յիւստակի եղաւ ասեւն ի յարժու կիսանցն, ի յուս տպագայից:

Հանգուցէ Տէր զհոգիս նուիրատուացն ի յոյս երեսաց իւրոց, եւ ասցէ Սրբոյ Ուխտի բարոյն ճեանութեամբ յօգուտ ի կիր արկանել զարդիւնս սորա ի պէս պայծառութեան Սրբափայլից Ազգիս որ ի Ս. Բողալիս. Ամէն:

● 26 Հոկտ. զՀ. Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Կիւրեղ վրդ. ի ե զիւսանապետ Պ. Նուրեանի այցելեց հրէական մեծ մատենադարանը, մերձաւոր արեւելքի մեծագոյն մատենադարանը, ուր կան 250000 հատոր գիրքեր: Ն. Ս. պատուով ընդունուեցաւ եւ շնորհեաւ հաստատութեան բոլոր մասերը:

● 28 Հոկտ. ուր. Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Գեղամ վրդ. ի ե զիւսանապետ Պ. Կ. Նուրեանի, այցելեց Զեթուալաւքիոյ հիւստատոսարանը, ի շնորհաւորութիւն սղգային անկախութեան տօնին:

● 29 Հոկտ. շր. Տ. Գարեգին, Տ. Սիւն եւ Տ. Զգօն վարդապետներ, անդամը կալ. Գննիչ Յանձնաժողովոյ, մեկնեցան Յոպպէ, տեղւոյն կալուածներուն վերաբերմամբ ուսումնասիրութեան մը համար: Տեղւոյն եկեղեցւոյն մէջ, յաջորդօրը, կիրակի, պատարագած է Տ. Սիւն վրդ., իսկ Տ. Զգօն վրդ. քարոզած է:

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ

● 1 Հոկտ. շր. կիրակամուտի ժամերգութեանէ վերջ, Ս. Պատրիարք Հայրը արեղայական վեղարի օրհնութիւն տուաւ այրիացեալ Տ. Թէոդորոս Ա. Գննչ. Զուղայեցի:

● Յաջորդ օրը, 2 Հոկտ. կիր. ճնորաստեղծեալէն յետոյ, Ն. Ամենապատուութիւնը վար-

դպետական գաւազանի իշխանութեան չորս եւ անմիջապէս յետոյ ծայրագոյնի տան աստիճանները շնորհեց Տ. Թէոդորոս արեղայ Զուղայեցի: Արարողութիւնը կատարուեցաւ սրտագրու հանդիսաւորութեամբ, ի ներկայութեան խառն բաղձութեան, որոնց, յետոյ, յաւարտ տըւուութեանց, Ս. Պատրիարքը ներկայացուց նորընծայ վարդապետը, թուելով իր ուսումնական եւ հոգեորական արժանիքները: Յետոյ, պատարագի միջոցին, զոր մատոյց Զուղայեցի Տ. Նսայի վրդ., Տ. Թէոդորոս Մ. վրդ. քարոզեց Բուք էք աղ երկրի աւետարանական բնարանին վրայ, բացատրեց հոգեորականին կուսմը, զայն ներկայացնելով իրրե պաշտօն բարոյական հոգեօրութեան եւ առաջնորդութեան:

● 7 Հոկտ. ուր. Տ. Տիրան վրդ., ընկերակցութեամբ Սարգիս սարկաւագի, մեկնեցաւ Ամման Անդրբողանանու. հոգեորապէս միթարելու համար տեղւոյն ժողովօրդը, եւ կատարելու համար տեղւոյն Հոգարարութեան ընտրութիւնը:

● Նոյն օրը, Տ. Գեորգ վրդ. Ռէմէլ մեկնեցաւ եւ յաջորդ օրը պատարագեց տեղւոյն Ս. Գեորգ մանքի եկեղեցիին մէջ, ի ներկայութեան բաղձաթիւ ուխտաւորներու, որոնք եկած էին Յոպպէ եւ շրջակայ վայրերէ Ս. Գեորգայ տօնին առթիւ:

● Նոյն օրը, Երեկոյեան, Տ. Սմբատ Արքայանի հանդիսապետութեամբ, Միարանութիւնը գնաց Դպտոց Ս. Գեորգ եկեղեցին, եւ, ըստ աւանդական իրաւանց, անդ կատարեց երեկոյի ժամերգութիւն եւ նախատօնակ:

● Յաջորդ առաւօտուն, 8 Հոկտ. շր. Միարանութիւնը Տ. Սմբատ Արքայանի ղիխաւորութեամբ զարձակ գնաց Դպտոց նոյն եկեղեցին, ուր պատարագեց Տ. Դաւիթ վրդ. եւ քարոզեց Տ. Զգօն վրդ. մարտիրոսութեան ուժի աղբիւրին եւ նահատակութեան պատկն ու փառքը կազմող արդիւնքներու մասին:

● Երեկոյին, Ս. Պատրիարքը Հրաշափառով առաջնորդուեցաւ Ս. Յարութիւն. եւ Ս. Գերեզմանին վրայ ուխտի երկրպագութեան եւ շուրջը թափօրէ վերջ, կիրակամուտի ժամերգութիւնը պաշտուեցաւ Հայկական Գողգոթայի վերնայարկ մատրան մէջ:

● 9 Հոկտ. կիր. վարագայ Խաչի տօնին առթիւ, Ս. Յարութեան Տաճարին մէջ, Փրկչի Գերեզմանին վրայ մատուցուեցաւ եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագ, ժամաբարն էր Տ. Սմբատ Արքայան, որ աղու քարոզ մը խօսեցաւ «Իրտեմ ես յո՛ հաւատացեալ եմ» բնարանով բացատրեց թէ ի Քրիստոս հաւատքը, երբ գիտակցութեամբ է պայծառացած, ինչպէս կը զօրացնէ մարդը կեանքի եւ գործունէութեան բոլոր մարդկերուն վրայ:

● 10 Հոկտ. բՀ. Տ. Թէոդորոս ծ. վրդ. Զուղայեցի մեկնեցաւ Պէյրութ, նաւարկելու համար զէպի Թրիէսը, ուսկից պիտի անցնի Գերմանիոյ համրով, Ամերիկա:

● 12 Հոկտ. զՀ. վանք վերադարձաւ Տ. Տիրան վրդ. որ պատարագած եւ քարոզած էր Ամմանի մէջ, եւ վերակազմած տեղւոյն Աղգ.

Մարմինը եւ վարժարանի հոգաբարձութիւնը, եւ այցելած էր մտատկայ փոքրիկ գաղութներուն իսկ Տ. Գէորգ վրդ. Պէյրութի մեկնեցաւ իր եղբոր տիկնոջ մահուան արտեր առթիւով:

● 16 Հոկտ. Ս. Յակոբեանց տանարին մէջ պատարագեց Տ. Զգոն վրդ. քարոզեց Ս. Պատրիարքը: Բացատրեց քրիստոնէական կրօնի իրատես նկարագիրը, որ երջանութիւնը կը պտուցնէ ոչ թէ վիշտին շնչումին այլ անոր հանգուածիւնը քաջութեան մէջ: Մարդիկ Քրիստոսի պէտք է երթան, ոչ թէ իրենց բնոր թօթուելու համար, այլ ստիպելու համար անկէ թէ ի՞նչ ընել պէտք է թեթեւ զգալու համար աշխարհի մեր վրայ դրած բեռը:

● 22 Հոկտ. չր. Սրբոց Բարձրամեծաց տօնի առթիւ կատարուեցան եկեղեցական պատշաճ հանդիսութիւնք. Լուսարարացեալ Տ. Մեթոդ Սրբազան Գլխադրի սեղանին առջև պատարագեց քահանայական զգեստաւորումով, ի յիշատակ տօնադարձի անուան Հոգեւորչոյ Տ. Եղիշէ Ս. Պատրիարքի: Ճաշու ընթացումով ատեն Ս. Պատրիարքը քարոզեց օրուան տօնին եւ լուսահոգւոյն յիշատակին անդրադարձութեամբ. Բացատրեց թէ քրիստոնէական հաւատքի պտղաբերութիւնը ի յայտ կուգայ շնորհաց բազմապատեմեան մէջ. իբրեւ այդ բազմապատիկ շնորհներու հանդիսարան մատնանիջ ըրաւ մեր եկեղեցւոյ կեանքին մէջ ոսկեղարը, եւ անոնց վերջին եւ ամենէն արժանաւոր ներկայացուցիչներէն մին հանդուցեալ մեծանուն պատրիարքը: Եւստ առաւելիք միջոցին, Տ. Մեթոդ Սրբազան յիշատակեց անմոռանալույն անուներ: Պատարագէն յետոյ հոգեհանգստեան յատուկ պաշտօն կատարուեցաւ Ս. Յակոբեանց տանարին մէջ միեւնոյն նպատակաւ իսկ ժամեղբութեան յետոյ, բովանդակ միարանութիւնը, ուսուցիչներ եւ ուսանողներ, Ս. Պատրիարքին առաջնորդութեամբ գացին Ս. Փրկչի վանքը, հանգ. պատրիարքներուն դամբարանը, ուր շքեղ պսակ մը զետեղեցին հանգուցեալին հողակոյտին վրայ եւ դարձեալ կատարեցին հանգստեան պաշտօն: Ս. Պատրիարքը օրհասուել ուղղեմ մը ըրաւ հոն եւ իր հոգեմնողին յիշատակին:

● 23 Հոկտ. կիր. Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան տանարի Հայկական Գողգոթայի վերնայարկ մատրան մէջ. ժամարարն էր Տ. Եսայի վրդ. քարոզեց Տ. Սմբատ Սրբազան, որ մասնաւորապէս խօսեցաւ եկեղեցական պաշտօնի կարևորութեան վրայ, եւ խօսեց ուղղելով նորեկ ժառանգաւորներուն, խրատեց զանոնք անսայթաք ընթանալ իրենց ասպարէզի համբուն վրայ:

● 24 Հոկտ. Տ. Գէորգ վրդ. վերադարձաւ Պէյրութէն:

● 30 Հոկտ. կիր. ի Ս. Յակոբ պատարագեց Տ. Մուշեղ վրդ., եւ քարոզեց Տ. Նորայր վրդ. Անուան անգղամն ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած ընտրանով: Յորտք կարգաց ճշմարիտ քրիստոնեաններուն որ ոչ միայն իրենց սրտին մէջ խոստովանին, այլ եւ իրենց վեհ ու բարի կեանքով քարոզեն շարունակ թէ Աստուած կայ:

● 31 Հոկտ. ըր. Ս. Յովսէփի յիշատակի օրուան առթիւ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուց: Ս. Աստուածամանի տանարին մէջ՝ Ս. Յովսէփի զերեղմանին վրայ, նոյն տանարի տեսուչ Հոգ. Տ. Հայկազուն վրդ. Աբրահամեան:

● Նախորդ ամսուայ տեղեկութեանց իբրև լրացում՝ կ'արձանագրենք հոս թէ Սեպտ. 25ի կիրակին, ըստ Հին Տօմարի Խաչվերացի տօնին, առաւօտուն, Ս. Պատարագէն յետոյ, կատարուեցաւ մեծահանդէս հոգեհանգիստ՝ Բարբերա Տիրար կարագեալ Մեղգոնեանի ծնողաց եւ պարագայից յիշատակին: Ս. Պատրիարքը օրուան պատարագիչն էր, քարոզի միջոցին խօսեցաւ յատկապէս այդ մասին, պանծացնելով Բարբերաբուն հայրենասէր նկարագիրը, իր ննջեցեալներուն համար երանական հանգիստ եւ իրեն համար քաջող կեանք մաղթելով:

Երեկոյն, ըստ սովորութեան, ընդհանուր սեղանատան մէջ հոգեհաշ կղաւ բոլոր միարաններուն եւ աշակերտաց մասնակցութեամբ ժառանգաւորները երգեցին Բարբերային երգը, խօսեցան Ս. Պատրիարքը եւ Ոսկան Պէյ. վերլուծելով Մեղգոնեան Բարբերաութեան այս մեծ գործը, եւ դասեր հանելով անկէջ ամէնուն համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԿԻՔԱԿԱՆ

● 3 Հոկտ. բժ. վարժարանաց ուսուցչական ժողովոյ զումարուեցաւ Ս. Պատրիարք Հօր ցախազանութեամբ, Ասենպէս քննուեցաւ Տ. Տիրան վրդ., իսկ Ասենպայիր՝ Տ. Զգոն վրդ., հաստատուեալ կրթական սարսոյ ա. օրջանի դասուցչական ու ժամանակացոյցը, եւ սկսան դասախօսութիւնները:

● 6 Հոկտ. եւ. Ս. Պատրիարքը, պատրիարհաբանի զանիցին մէջ, իր կողմէ քնդհ. միաբանութեան տուած քէյտեղանի մը առջեւ կարգաց եկեղեցւոյ Բարեկարգութեան խնդրին մասին իր պատասխատ մէկ գրութիւնը, որ իբրեւ իր տեսութիւնը զրկուեցաւ էջմիածին. այդ գրութեան առաջին կէտը կը հրատարակուի «Սիւն»ի ներկայ թիւին մէջ:

● 18 Հոկտ. գո. Ս. Արտ. ժամանցեցին եօրը նոր ժառանգաւորներ, առաջինները քանդիցիւղէն, գոս Տ. Տիրան վրդ. քննուեց էր Սիւնիոյ Բաղամերէ:

● 23 Հոկտ. կիր. կէտէ վերջ կատարուեցաւ նուազէն Կիւլաբեկեան Մասեմազարանի բացման հանդէսը, որուն մասնաւորապէս նկարագրուեցաւ մասնաւոր յաւելումով կը հրատարակուի «Սիւն»ի այս թիւին մէջ:

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Արժ. Տ. Համբարձում Բնի. Ս. Վարդանեան, ի Ռեմոն, Ս. Արտ. Ս. Սուրբ զրկած է 204 օրինակ «Երեցեղութիւն» Սրբոյ Պատարագի» (Մ. Եկմալեանի) գոս ինք կազմած է՝ ձայնակետէն իջեցնելով եւ յաւելումներով: Ըստ իր փափաքին, այն 204 օրինակներէն չորսը իր կողմէ նուէր զրկուեցաւ Կիլիկիոյ կարողիկաութեան, իսկ մնացեալ 200 օրինակը վանաւորելով արդիւնքին կէտը պիտի յասկացուի Ս. Էջմիածին Մայր Տանարին, իբրեւ լուսաղբ, եւ միւս կէտը՝ Ս. Յակոբեանց Վանքին: Շնորհակալութեամբ կ'արձանագրենք այս նուէր պատ. Տ. Հօր կողմէ, եւ կը գնահատենք իր աշխատասիրութիւնն ու նուիրումը ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ: